թէպէտ և կան ալ որ ունին փամփուշտ բայց ընդհանրապէս ջրոյն տակը կը կենան ու խիստ քիչ անգամ վեր կ'ելլեն, ինչպէս է օձաձուկը։

Ձկները քիթ ունին, բայց յայտնի չէ թէ ինչպէս հոտ կ'առնեն. կ'երևնայ թէ ինչպէս մենք օդին հետ խառնուած հոտը կ'առնենք, ասանկ ալ իրենք ջրոյն հետ խառնածն. ապա թէ ոչ՝ շատը անօթութենէ պէտք էին մեռնիլ։ Իսկ համառութեան զգայարանքնին կ'երևնայ թէ ամենունը հաւասար չէ։

Ձկանց ըղեղը չորքոտանիներէն ու թռչուններէն պզտիկ է. կան մեծ ձկներ ալ որ ըղեղնին չորքոտանեաց պէս երկու բաժնուած է զատ զատ ամանով ու ամանին ներսի դին պարապ։

Աչքերնին սուր է թէ ջրոյն մէջ և թէ ջրէն դուրս. ասոր փորձը երբեմն երբեմն ձանձ որսալու համար դուրս ցատքելնէն կ'իմացուի. արտևանունք չունին ու բիբերնին անփոփոխ, ոչ կը մեծնայ և ոչ կը պզտիկնայ։

Կ'ըսեն թէ ձկները ականջ չունին և խուլի պէս են, բայց կ'երևնայ թէ լսելու գործարան մը պիտի ունենան, ինչու որ կը տեսնենք որ շատ տեղ երբոր կ'ուզեն մարդիկ իրենց ձկներուն կերակուր տալ, զանգակի ձայնով զիրենք կը կանչեն. դարձեալ կարգէ դուրս ձայն մը լսածնուն պէս մէկէն ջրոյն տակը կը փախչին։

Ձկներուն վրայ ամենէն զարմանալի բանը իրենց երկայն ապրիլն է. վասն զի մարդկանց հիւանդանալուն մեծ պատճառը օդին փոփոխութենէն առաջ կուգայ, իսկ ձկները միակերպութեան մէջ ըլլալով անվնաս կը մնան։ Յամաքային կենդանիք որչափ հասակնին կ'առնեն այնչափ աւելի տկարութիւննին կը շատնայ. իսկ ձկներն որչափ կը մեծնան այնչափ աւելի կ'ուժգնան։ Ինչուան հիմա դեռ չիմացան մարդիկ ձկներուն որչափ ապրիլը, կարելի է թէ կ'ըսեն և ոչ մարդուս կեանքը բաւէ ասբանս քննելու։

Ձկները բնութեամբ շատակեր ու պաղ են, բայց մարսողութիւննին զօրաւոր ըլլալով ամէն կերածնին կը մարսեն. և մէկզմէկ ուտելով կը մնանին։

Ջրային կենդանեաց ակռաներն որսալու միայն կը ծառայէ, իսկ ծամելու ոչ։

Ձկներն խիստ բազմածնունդ են՝ և ասոնցմէ ոմանք հաւկիթ կը բերեն, ոմանք ալ ողջ կը ծնանին. բայց որչափ որ հաւկիթ կը բերեն, հաղիւ հարիւրէն մէկը կը մնայ, վասն զի իրենցմէ մեծերուն կերակուր կ'ըլլան. և սակայն զարմանք է թէ այսչափ որսալէն ետքը ինչպէս տեսակնին չկորսուիր ու կերակուրնին չպակսիր։ Ձկներ ալ կան որ ցամաքային կենդանիներուն պէս շատը մէկ տեղ կը պտըտին՝ խոշոր ձկներուն ձեռքէն զիրենք պաշտպանելու համար։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Որդեկան սիրոյ օրինակ։

Ունաց նախարարներէն մէկը դատապարտուեցաւ մեռնելու. ասոր ըսեց նախարարին որդին որ դեռ տասնըհինգ տարեկան էր, մէկէն վազեց կայսեր ոտքը ինկաւ լալով, ու կը խնդրէր որ հօրը տեղը զինքը մեռցընեն։ Կայսրը անոր որդիական սիրոյն վրայ զարմանալով, գութը շարժեցաւ, ու հօրը յանցանքը ներեց։ Ուզելով ալ տղուն առաքինութիւնը կերպով մը վարձատրել՝ պատուոյ նշան մը տուաւ անոր, բայց պատանին հրաժարեցաւ ան պարգևէն. Ցեմ՛ուզեր, ըսաւ, այնպիսի նշան մը վրաս ունենալ, որ հօրս յանցանքը ինծի և ամենուն պիտի յիշեցընէ։